

անասնոց՝ է այս. որովհետեւ ինչպէս ըսինք նախընթացաբար որ այս կրեալք երկայն ժամանակ անշարժ կը կենան ջրոց յատակը, այս անշարժութեան հետեանք կ'ուզան շատ մը մակարոյժ (parasites) բուսականդանք արմատ ձգելու իրեն պատենին վրայ որով գրեթէ անշմարելի կը լինի, արգէն ջրոց յատակը լի լինելով նմանօրինակ բոյսերով:

Թէմմինքի Զրակրիայն իւր այս բնիկ վայրենութեամբն հանդերձ միատեղ կրնայ ապրիլ իրեն ստորակարգեալ ուրիշ ցեղի մը հետ որ է Օձաջրակրիայ (Chélydre serpentine), որոյ թէ և հասակին մեծութիւնը չհաւասարի թէմմինքի Զրակրիային, սակայն վայրագութիւնը և նենգօտութիւնը շատ աւելի կը գերազանցէ քան զայն, ինչպէս որ յայտ է նոյն իսկ իւր անուանակոչութենէն. այնպէս որ իւր ազատ դրից մէջ ոչ զոք կը թողու որ իրեն մօտենայ, և կամ համարձակի իրեն բնակելի ջուրց մէջ մտնել որ և իցէ պատճառաւ, այլ յետս կը դարձնէ պատճառելով մեծամեծ վերքեր և երբեմն նաեւ մահ իսկ:

Այս կրիայից ջրոց մէջ ունեցած արագաշարժութիւնն յոյժ զարմանելի է, մինչդեռ անոր հակառակ երբ կ'ելլեն հոյոյ վրայ, հազիւ հազ կրնան քայլել, որով ոչ երբեք ջրէն դուրս կ'ելլեն, բայց եթէ ստիպեալ ի բնութենէ իրենց հաւիթները ծածկելու համար ընդ հողով, և որք յոյժ յարգի են իրենց համեղութեամբն, և ընդհանրապէս կը լինին 20 — 30 իւրովանչիւր անգամ: Սակայն ասոր հակառակ իրենց միտը անճաշակելի է ամենեւին սաստիկ մշկահոտ լինելուն պատճառաւ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաղղիա. — Այս մի քանի ամսոց մէջ ի Գաղղիա մեծամեծ քաղաքական կարևոր յեղափոխութիւնք տեղի ունեցան: Շաբաթներով և ամիսներով ամէն տեղ հրատարակուած լրագրաց մէջ մեծագոյն մասն գրաւեր է և կը գրաւէ իսկ ցարդ զօրավարն Պուլանժէ: Ոչ ոք ցարդ հաւաստեալ չիտէ այս զօրավարին՝ Գաղղիոյ բազմաթիւ կուսակցութեանց որո՞ւ պատկանիլն. թէ և շատ հաւանական համարին, թէ գաղտնի յարաբերութեան մէջ է ընդ թագաւորականս: Շնորհիւ իւր ժողովրդականութեան՝ Պուլանժէ Յունուար 27ին քուէարկութեան՝ մեծ առաւելութեամբ քուէից ընտրուեցաւ պատգամաւոր Խորիզու: Բայց յիշաւի կը զարմանայ բովանդակ եւրոպեան մամուլն, որ զօրավարն ընտրութենէ վերջը քաջուեցաւ առանձնացաւ՝ որպէս թէ փափաքի թողուլ քաղաքական կեանքը: Յլրքէ պաշտօնարանն իսկոյն յայտարարեց թէ վասն ապահովութեան երկրին

պատրաստ է հրաժարական տալու, բարեկամք և կողմնակիցք քաջա-
լերեւով զինքը կը փափաքէին որ հաստատուն կենայ, յիշխանութեան,
սակայն երբ իւր վերջին խնդիրը մերժուեցաւ յԱտենէն՝ պաշտօնա-
րանն ալ ընկաւ: Նահագահէն փառնոյ՝ նոր պաշտօնարան մը կազմելու
գործն Մեխինի յանձնեց, որ և չկրնալով կատարել հրաժարեցաւ:



Աւարտիւս. — Մինչ եւրոպական լրագրութեան ուշը գրուեր էր
վերոյիշեալ գաղղիական խնդիրն, յանկարծակի Յունուար 30ին բռ-
թայից լուր մը հնչեց իրազգասէր Աւստրիայէն, տարածեցաւ ընդ
բոլմանդակ աշխարհ, զարմացուց և յուզեց զնա: Թագաժառանգ իշ-
խանն Աւստրիոյ Ռոտովֆ իւր երեսնամեայ ծաղկայից հասակին մէջ կը
թառամի: Բազմութիւն են այս մահուան անստոյգ և կարծեցեալ պատ-
ճառք և մեկնութիւնք. ոմանք ըսին, թէ յանկարծամահ եղեր է. այլ
այս լուրն նոյն իսկ պաշտօնապէս անհիմն և անստոյգ հրատարակուե-
ցաւ. այլք դաւաճանութիւն են թաղութեցին՝ ձեռամբ բարձրաստիճան
անձի մը. այլք անձնասպանութիւն կարծեցին, շատք ևս՝ ամերիկեան
մենամարտութիւն մի: Սակայն յայս կարծեաց և ոչ մին բոլորովին
ստոյգ և հաւաստի է. վրանդի կառավարութիւնն գովելի հետա-
մտութեամբ ջանաց ծածկել ստոյգ պատճառը, և յաջողեցաւ իսկ
հակառակ կարծեաց լրագրապետաց և թղթակցաց, որք կը պարծէին
թէ այսպիսի դարու մէջ՝ յորում անհամար և ամենագիւրին են հա-
ղորդակցութիւնք՝ անկարելի է ծածկել իրողութիւնը: Սակայն այս-
չսփ ինչ ստոյգ է, թէ թագաժառանգին մահն սաստիկ սիրոյ մը դառն
պտուղն է: Մահուան լուրն երբ տարածուեցաւ՝ եւրոպա անհամբռ-
րութեամբ կ'սպասէր իմանալ նոր թագաժառանգին անունը, կայ-
սեր երկրորդ եղբոր Կարոլոսի անդրանիկ որդին թագաժառանգ հրա-
տարակուեցաւ, որոյ անունն է ֆրանկիսկոս փերդինանտոս արքի-
զուքս Աւստրիա — էսդէ:



Իտալիա. — Իտալիոյ մէջ հանդիպած նշանաւոր քաղաքական դի-
պաց մին է քաղի ձառք. այսինքն, թագաւորին ծանուցումը՝ ի բացման
Ատենից, զոր ծաղրայից և շատ ցուրտ կերպով ընդունեցաւ ընհանրա-
պէս գաղղիական լրագրութիւնն: Յիշատակաց արժանի դէպք մ'ալ
է Հռովմայ բազմաթիւ գործաւորաց յարուցած խռովութիւնն. լրա-
գիրք ասոնց թիւը մինչև 2000ի հասուցին. կառավարութիւնն և ոս-
տիկանութիւնն՝ արգելք կամաւ թէ ակամայ՝ խիստ թոյլ և անզօր մի-
ջոցներ ի գործ դրաւ զանոնք սանձելու համար, բայց այժմ կարծուի
թէ ամենայն ինչ կարգի մտաւ և խաղաղութիւնը տիրեց մայրաքա-
ղաքին մէջ: